

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ, Ապրիլի փողոց

ՄՈՒԿԱԹՈՒՄԻ ձիւց ղիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du journal PHAROS
Le Caire, rue Abdine
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒԹՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

ՄԷԿ անգամի համար տողը 3 ՂՂ. ողջ.
ՄԷԿ անգամի անկի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆ ԳՐԴԴՐՈՒԹԻՒՆ

ԵԿԵՐՄԱՆ ԶԱՄԱՆ

Տարեկան ՂՂ. ողջ 100
Վեցամսեայ » 55
Եռամսեայ » 30

ՕՏԱՐ ԵՐԿԻՐԵՐՈՒ ԶԱՄԱՆ

Տարեկան Ֆր. 26
Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԹԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂՂՈՒՄ

ՈՒՆԷ ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

Լ. Ր. Ա. Գ. Ի. Ր.

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՅԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱՆՓԻՍԻ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ինչպէս արդէն մեր առաջին թուով
ծանուցած ենք, «Փարոս»-ի տնօրէնու-
թիւնը իր բոլոր ուղարկութիւնը և
ժամանակը թերթին խմբագրութեան
և անոր զարգացման նուիրել կարե-
նալու համար, այս անգամ մատու-
կարարութեան ճիշդ բոլորովին զու-
տած է խմբագրութեանը, Քաղաքիս
պատուաւոր սեղանաւորներէն ՄԵՐ.
ՍԱՐԳԻՍ Է. Ֆ. ՄԻՐԱՆԵԱՆ բարե-
հաճած է ստանձնել այդ ճիւղը, Հե-
տեալեւ այսօրու ինչպէս սկսեալ «Փա-
րոս»-ի հին և նոր բաժնեգրներու
և վճարեալ հրատարակութեանց այն
ստացակները միայն վաճարակն
են որոնք տնօրէնութեանս կնիքը և
միեւնոյն ատեն ՄԻՐԱՆԵԱՆ ԷՖԷՆՈՒԻ
ստորագրութիւնը կը կրեն:

ՄԻՐԱՆԵԱՆ ԷՖԷՆՈՒԻ գործատեղին
է ի Պապ-Էլ-Խալա, կառավարչա-
կան պալատան դիմաց:

AVIS IMPORTANT

La direction du «Pharos» a l'hon-
neur de porter à la connaissance de
ses abonnés et du public en général,
qu'ayant confié l'administration du
journal à M. SARKIS MIRANIAN, à
Bab el Khalk, en face du Gouvernorat,
tous les reçus tant pour les abon-
nements que pour les annonces
doivent porter la signature
de l'Administrateur conjointement
avec le cachet de la Direction.

ՏՐԱՏԵՓԱՆ ՓԱՇԱ

ԱՍԼԱՆԵԱՆ

1822-1901

Պիտոյ ազգային թերթերը օրը օրին
ծանուցին Ստեփան փաշայի հիւանդութեան
զանազան երևոյթներն ու ակտիւ վախճանը
ու երկարածիքը Էջերու մէջ հրատարակեցին
անոր կենսագրութեան գլխաւոր գիծերը,
շեշտելով թէ ինչպէս պարզ ծեփարարի մը
չափով, իր բնածիր յատկութիւններով պեր-
ճախօս ատենաբան մը, առաջնակարգ վար-
չագետ մը, գիտութեան իշխան մը և զօ-
րավարութեան աստիճանով (փաշա) բոլորի
մը եղած է, վարելով պետական զանազան
կարևոր պաշտօններ, ու շատ մեծ դերը մը
բռնելով ազգային կեանքին մէջ, Սահմա-

մանագրութեան հաստատութեան յառաջ և
յետոյ, իրեն անգամ և ատենապետ կեղ-
բոնական այլևայլ խորհուրդներու, Ընդհա-
նոր և Քաղաքական ժողովներու, որոնց
մէջ իր դերն ու ընթացքը շատ արդիւնաւոր
եղած է, թէ և երբեք ճանաչատուած է մա-
մուլին մէջ մասն, ինչ որ ամեն երկրի,
տեղի ու ժամանակի մէջ, անվերջ ճակա-
տագիրն է հանրային թիւ կամ շատ կարե-
ւոր պաշտօններու զուգը գտնուողներուն
համար: Մեր նպատակէն դուրս է մեծանուն
հանգուցեալին ամբողջական կենսագրու-
թիւնը բնի «Փարոս»-ի սուղ էջերուն մէջ:
Կ'ուզենք միայն ի վեր հանել ազգին այս
հոյակապ զաւկին կեանքի այն պարագա-
ներն, որ Պաշի թերթերը թերթի թողուցին
և կամ հաղիւ թէ հարեանցի նկարագր-
ութիւններով միայն կրցան յիշել:

Ստեփան փաշա, թէ և ամբարյի փեսայ,
Չերմեանց հակառակորդ մ'եղած է ամի-
րայութեան, եղած է քաջամարտիկ ակոյեան
մը ժողովուրդին իրաւունքներուն և զործադ-
րութեան Սահմանագրութեան, որու խմբ-
ագիրներէն մէկը եղած է Օտտանի, Աղա-
թոյններու, Ռուսիանի և ուրիշներու հետ:
Իր մահով՝ 1864ին ազգին օրէնքը հեղի-
նակելու պաշտօն ունեցող պետական և
ազգային կրկին Յանձնաժողովներուն ողջ
մնացող վերջին անդամն է որ կ'անհետանայ:
Թէ և Ստեփան փաշա շատ ապրեցաւ, բայց
շատ ալ դժբաղդութիւններ ու վիշտեր կը-
րեց: Իր ոտնները, միջոցը գտան ազգային
ծանօթ խնդիրներու առթիւ, զինքը կասկա-
ծելի ցուցունելու կառավարութեան. ոտիպ-
ուեցաւ Պաշի ունեցած անձնական տունը
ձախել ու Եգիպտոս ապաստանիլ իր ըն-
տանիքովը ու ամբողջ 15 տարիներ, իր
հանգստի թոշակը, տարեկան իբր 7,000
ֆրանք, չ'վճարուեցաւ իրեն պետական
զանձէն:

Աւանան փարաւորներու երկիրը եկած
ժամանակ, 20—22 տարի յառաջ, տեղա-
կան ազգային գործերը խառնաշփոթ կա-
ցութեան մը մասնուած էին. կառավարելու
եկամուտները, Միսրոպեան խնդիրն ուղիւ,
կամ օրինական արգելքի տակ առնուած էին
և կամ պարտքի յատկացուած էին մեծ մա-
սով, ազգային պաշտօնական մարմինները
թերթի կազմութիւնն ունէին և գործը մինչև
հոն հասած էր որ ազգային միակ վարժա-
րանի տեսչութիւնը յանձնուած էր ազգային
Վարչութեան անկախ ընկերութեան մը,
որ կը հոգար վարժարանի ծախքը, եայնս:
Իրաց այս ցաւալի վիճակին շարունա-
կութիւնը ներքի չէր, վարչական զօրեղ
ձեռք մը պէտք էր կացութիւնը փրկելու
համար ու ազգային կեդրոնական Վարչու-

թիւնը, ներշնչեալ յաւերայիշատակ Ներսէս
Պատրիարքէն, 1883ի զարնան Ստեփան
փաշան ազգային լիազօր պատուիրակ կար-
գեց Եգիպտոսի, պաշտօն տալով անոր,
տեղական գործերն ու խնդիրները ճշնել ու
ամեն ինչ օրինաց և արդարութեան սահ-
մանին մէջ կարգադրել:

Ստեփան փաշա, յաղթելով շատ մը
խոչընդոտներու և աշակցութեամբ իր ան-
ունան իրաւ օգնականներուն որեն թողմաս
էֆ. Բրուտեան և հանգուցեալ Յովհաննէս
էֆ. Պալմեան, յաջողեցաւ քանի մ'ամի-
սին ի դուրս հանել իր գծաւարին պաշտօնը,
որու գլխաւոր արդիւնքները եղան.

1. — Պարտքի խնդիրն, որ հաշարաւոր
ոսկիներ արժած է Գահիրէի սնտուկին,
կարգադրուեցաւ իրաւաստութեամբ և կալ-
ուածներու եկամուտները արգելքէ ազա-
տեցան:

2. — 1883ի համաճարակ ահուկի զօ-
ւերային առն, Գահիրէի հայ զաւուրթը,
մասնաւոր կարօտ դասակարգը, ախտին
հարուածներուն դէմ պաշտպանելու համար
նիւթական և բարոյական ամեն ջանք ի գործ
դրուեցան, որով բազմաթիւ կեանքեր փրկ-
ուեցան մահի սև ժանիքներէն:

3. — 1889ի Դեկտեմբերին, օրէնքին
տրամադրութեան համաձայն՝ ընտրուեցան
Եգիպտոսի Գաւառական Ընդհանուր ժողո-
ւին Գահիրէի բաժնին 16 անդամներն. կազ-
մուեցաւ Քաղաքական ժողով, թաղական
խորհուրդ, յատուկ Հոգաբարձութիւն, որու
յանձնուեցան վարժարանի շէնքն ու մատա-
կարարութիւնը:

Ստեփան փաշան է, որ համոզած է Տիգ-
րան փաշան ընդունելու յիշեալ Ընդհանուր
ժողովի անդամակցութիւնը, որու կողմած
էր ժողովուրդին բուհով: Տիգրան փաշայի
անդրանիկ մուտքն է այս ազգային պաշ-
տօններուն մէջ, ուր իր ներկայութիւնը գե-
րազանցապէս օգտակար եղած է ազգին
շահերուն:

Ստեփան փաշա շատ աշխատած է նաև
որ Ընդհանուր ժողովին մէջ Աղբրանդիւրի
ալ ներկայացուցիչ ունենայ և այս մասին
բանակցած է այն ատեն Աղբրանդիւրի
ազգային գործերու վարիչ Թաւաթ փաշայի
հետ, բայց իր ջանքերն ապարդիւն մնա-
ցած են զժողովարար:

Ստեփան փաշա պարագաներուն ու տե-
ղական պահանջներուն համաձայն իր
լիազօր պատուիրակութեան պաշտօնը կա-
տարել է յետոյ՝ հրաժարած է 1884ին, կը-
րելով իր սրտին մէջ արիւնալի վերք մը,
որ այդ միջոցին մէջ, բացած էին տարա-
ժամ մահերն երկու սիրելիներուն, առաջին
ամուսնութեան արգասիք յուսալից Երուան-

դին և իր կենաց երկրորդ ընկերուհին, որ
շուրջալի ու գերազնիւ տիկին մ'էր: ՄԷԿ
քանի շաբաթ տարբերութեամբ պատահած
այս երկու ամենատխուր դեպքերէն զերթ
անմիջապէս յետոյ, Աւանան մեկնեցաւ
ի Պաշիս, ուր մահէն 4—5 տարի յառաջ
վերահաստատուեցաւ հանգիստի թոշակը
և նորէն կոչուեցաւ Քաղաքական ժողովի
Բ. ատենապետութեան, առաջինը ըլլալով
ողբացեալ Տատեան Արթին փաշա, մեծա-
նուն դիւանագետը:

Ինչ որ ալ ըլլան Ստեփան փաշայի այս
վերջին պաշտօնավարութեան մասին եղած
քննադատութիւններն, իր մահը դառն կո-
րուստ մըն է ազգին համար ու իր մեծ
արժանիքը ամեն կողմէ ընդունուած ու
գնահատուած: Երբեք իր յիշատակին:

Ն. Մ. ԱՂԱՋԱՐՄ

ԿՆՈՋ ՄՈՐԹԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

(Շար. 34րդ. թիւէն և վերջ)

Այս տեսակ արեւահար գոյներու համար
հետեալ դարմանը կը յանձնարարենք.

20ական կրամ

Սալօմ մէտիքալ ֆելվէրիզէ
Ժիւ տը սիթրօմ
Օ Օթսիտէմէ

օրը երեք անգամ գէմքին սեցած մասերուն
վրայ բսելով, քսան վայրկեան սպասել վերջ
լուալու է

Թէմթիւր տէրալի բթիւս ուլ:

Ընդհակառակը ուրիշ կիներ չափազանց
զուսաւ մորթ մը ունին և իրենց գէմքը
ժամանակէն կանուխ կը ծերանայ ու կը
խորշոմի, ու պարագային օգտակար է թեփի
շուրով գաղջ լոգանք մը ընել (պաճիօյի
մէջ), ջրին մէջ 60 կրամ ասիտ ֆելվէր
գնելով, իսկ իւրաքանչիւր ճաշէ առաջ պէտք
է քսան կաթիլ հետեալ զեղէն առնել:

20ական կրամ

Թէմթիւր տը Ժէլսէմիօմ
» տը վիպուրօմ
» տը ժապօրամտի

նաև գէմքը լուալու է խաշած պաղ ջու-
րով, որուն մէջ քիչ մը Բլօրալ կամ ասիտ
Բլօրիտրիք աւելցնել օգտակար է:

Եթէ խորշոմները արդէն ոկսած են ափօ-
սել գէմքը, կարելի եղածին չափ ատոր ա-
ռաջը առնելու համար երեկոյները գէմքին
քնելու է հետեալ զեղը:

Թէմթիւր տը Պօմ տը յա Մէք 60 կրամ
Կլիսէրիմ 20 »
Ալօմ Գալսիմէ 4 »

Երբեք կիներու գէմքը բնականէն հա-
կամէտ կ'ըլլայ արիւնախոտութեան (գոմօէս-

Խ. Տ Ե Մ Ի Ր Ձ Ե Ա Ն

ԱՅԱՄՆԱՔՈՅԺ

ՔԵԱՄԷԼ ՓՈՂՈՑ ԹԻՒ 3 ՕԹԷԼ ՇԵՓԸՐՏՈՒ ԴԻՄԱՑ

Ելեքտրական գործիքներով անմիջական և առանց ցաւի աւին տեսակ
ակաւայի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն բնականին յար և
նման կեղծ ակաւներու, ջանքիներու ոսկիէ, աշխուհիօմ է, Բաւոյն է:
Ապահով և տոկոսն քօլոնպաժ ոսկի, բլաթին, կայն, կայն: Լինտերու
հիւանդութեանց դարմանում ելեքտրական և ուրիշ միջոցներով:

թիւ 11) և որոնք փոքրիկ պատճառով մը կը կարմրին. այս վիճակը զիրենք կառաջնորդող գոլըրըզ կոչուած հիւանդութեան մը, որուն դարմանումը շատ երկար ու դժուարին է:

Երբ կնոջ մը դեմքը այս հակամիտութիւնը ունի պէտք է զգուշանալ առատ միւս ուտելիք. Դեմքի արիւնախոնքութիւնն ունեցող կիներու համար խոհանութիւնն է օրը մէկ անգամ միայն ճերմակ միս ուտել, իսկ միւս ճաշերուն կաթնեղէն, բանջարեղէն ու խմորեղէնով գոհանալ, և իբր ըմպելիք թեթեւ գարեջուր մը գործածել:

Հով չեղած ժամանակ, բացօթեայ տեղեր պտոյտներ կատարելով, առատ երեկոյ ալքով և կամ օ տը քօլօնելով բուր մարմինը շփելն ու վայրկեանի մը չափ ոտքերու պաշտօնը շատ օգտակար են: Նաև ամեն առատ սուրճի մը զգալ հեռեկան մաքրողական փոշիէն առնելու է, գաւաթ մը թեթեւ թէյի մէջ դնելով:

Հասարակ չափերով
Ասիտ պէմզօր
Պիգարաօմաթ 3 տը սուտ
Ֆօսֆօթ 3 տը սուտ
Սոլֆուր 1 քվէ
Մամեկզի 1 քուտ

Ինչպէս նաև իւրաքանչիւր ճաշէ առաջ աւար կաթիլ հետեւալ գեղէն:

Հասարակ չափերով
Թէթիւր տէրկօ տը սէկլը
» տը մուսա վօմիթ
» տը տիփիթալ
» տ'ամամէլիս
» տ'իտրապիս

Խորհուրդ կուտանք նաև օրը բանի մը անգամ իրօսիւլֆիտ տը սուտի զօրաւոր լուծարողով տաք շոգիացում (քիւլվէրի-զասիօմ) ընել երեսին վրայ. ասիկայ կը փութացնէ արեան շրջանը, կը մաքրէ մորթին իւրաքանչիւրը, կը ցրուէ արեան համախոնքութիւնը. բայց եթէ հիւանդութիւնը այնչափ առաջ գացած է որ երեսին ու բըթին երակները լայնցած են ու մորթը կապոյտի դարձող գոյն մը ունի՝ այն ատեն այս դարմանը անօգուտ է և վերաբուծին դիմելու է:

Երեսի մորթին բորբոքումը որ էքզէմա կը կոչուի, շատ անգամ գէշ օճառի, փոշիի, հերթափ գեղերու ու այլալը ուրիշ գրգռիչ անուշաճոտ ներկերու և խղերու գործածութենէն առաջ կուգայ: Նախ և առաջ մորթը կը կարմրի, կ'առի, կը տաքնայ ու կը բորբոքի. ասոնք էկզէմայի սկզբնաւորութիւնն են, որ պէտք է անմիջապէս դարմանել, ասիտ պօրթի լուծարողով:

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (37)
ԺԸՀԱՆ ՏԻՎՐԷ

ԲՐԷՆԱ ՄՈՒՐԱՏ
ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇՆՉՈՒՄԻՆ ՉԷՊ

ԳԼՈՒԽ Թ.

Սթա Ապուհա իրեն համար քրոջմէ մը աւելի եղած էր. ամենէն առաջ, ան միայն սիրած էր զինքը, ու ամենուն գէմ պաշտպանած էր. ինչ որ ալ ըլլար, Ժերմէն պիտի կարենար անոր փոխարէնը հաստցանել, պիտի աղաչէր, ինքը որ այնչափ հպարտ էր, պիտի պաղատէր, ելլէ պէտք ըլլար՝ պիտի լար, բայց պիտի ազատէր զանի այն ծերունիին ձեռքէն, թող

լուալով և կամ լաւ տեսակ գօլտ քրիմ քսելու է, որուն մէջ լաւ է աւելցնել 30 մասին մէկ մաս օքսիտ տը զէմք:

Վերջը յիշուած պատճառներէն դատ էկզէմա կրնայ առաջ գալ դժուարամարտութենէ և մանաւանդ պնդութենէ, նաև յօգացալ, դժուարաշնչութիւն (asthma), շաքարախտ կ'ըն. ունեցող կիները ու շարունակ ձուկեղէն, խեցեղէն, անուշեղէն, աղած միսեր ու զօրաւոր պանիր ուտողները տրամադիր են մորթի այդ անոտանի ախտը ունենալու. ինչպէս նաև անոնք որ իօտիւր, պրօմիւր, ամթիփիւրիմ և զօրալ ըսուած գեղերը կ'առնեն:

Նաև բարոյական մեծ յուզումները, ջրղային դրութեան միջոցաւ կրնան մորթի հիւանդութիւնն առաջ բերել:

Էկզէման ոչ միայն կնոջ գեղեցկութիւնը կը բանգէ, այլև անբուժելի, ջրղային ակարութիւնն ու նիւթարութիւնն առաջ կը բերէ, պատճառած շարունակական բերունքով. ուստի անհրաժեշտ է որ հիւանդները շուտով բժշկին դիմեն:

Էկզէմա ունեցողներուն կը յանձնարարենք օրը երեք անգամ, իւրաքանչիւր անգամ հետեւալ չափով առնել

Սալիցէթ 0,50 սանթիլլում
Գլօրիւր տը գալիսիօմ 0,50
»
Իսի Կուրէն հիւանդ մասին վրայ քսելու է կլիսէթօլէ թրաթիւրիզ ու վրայէն ցանկու է հետեւալ փոշին:

Ամիտօմ 2 մաս
Քարպօմաթ տը մամեկզի 1 »

Երբ մորթը կը չորնայ ու կ'սկսի թերթ թերթ թափել՝ այն ատեն պէտք է դադարեցնել վերի դարմանը ու ուիլ տը էքս սալիսիլէ օ սանթիլլումով օճելու է:

Երթունքներու էկզէման ու ճաթրտուքը պէտք է շուտով ինձամել. հակառակ անշունքան մը ինչեղուն շատ անգամ ցաւ կը պատճառէ ու կ'ոյժ ամենէն սիրուն ժպիտը այլ լանդիլ ծամածրութեան մը կը փոխէ, պէտք է նաև խածնել կամ ծծել շրթները որ կրնայ անհաճօ բորբոքման մը պատճառ ըլլալ:

Երբեք ջրղային կիներու մօտ, աչքի կուրծն մորթը գունատը քրտնք մը կ'արտադրէ, որուն քրօմիտրօզ անունը կուտան բժշկները. այս տարօրինակ հիւանդութիւնը բուժելու համար հետեւալ պղք քսելու է.

Ասիտ ֆէմիզ 1 քրամ
Կլիսէթօլէ տ'ամիտօմ 60 »

Ահաւասիկ բանի մը առողջապահական խորհուրդներ. որոնցմէ կը յուսամ թէ պիտի կրնան օգտուիլ շատեր. մենք ջերմա-

չպիտի տար որ այդ անուշ արարածը, իր աչքին լոյսը, իրեն ճարակ նետուէր այն մօրի հիւանդկախին:

Թերես, եթէ չըլլար այդ խնդիրը, այդ հայցածքը զոր կ'օգրէ բրէնսին ուղղել, պիտի զգուշանար անոր հետ մեկտեղ գլտնուելէ, այն խոռվայոյզ վիճակին մէջ յորում կ'ապրէր պտոյտի ատեն անոր հանդիպումէն ի վեր՝ իրեն համար աւելի աղէկ էր զանի չտեսնելը. պատրուակ մը գտնելը դիւրին էր. բայց, իր սրտին բոցեռանդն գթասիրութեամբ մէջ, ինքզինքը ամբողջովին կը մոռնար, և միայն իր քրքրի բարեկամութիւնը կը մտածէր՝ որուն կ'ըստպատար այնչափ մեծ գթասիրտութիւն մը:

Ու վայրկեանէ մը ի վեր տատամտօտ կը կենար, մտահոգ, չգիտնալով թէ ինչ կերպով բանաձեւէր անոր ընելիք խնդրուած:

պէս կը փափաքէր որ այս ուսումը մօտ գտնէր մեր ժողովրդեան ամեն դասակարգերուն մէջ ուր հիւանդութենէն ալի տղիւնութիւնն է որ մեծամեծ փեսաներ կը պատճառէ. գոնէ մեր կիները սորվէին գիտակա-նօրէն գնահատել գեղեցկութեան յարգը ու հետամուտ ըլլալին պահպանելու զայն կարելին չափ երկար տուն, բանի որ գեղեցկութիւնը կնոջ համար կեանքին մէջ յաջողելու աստարդ էական պայմաններէն մէկն է ու իր մեծագոյն զօրութիւնը:

ՏՐ. Դ.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ե.

Ն. Վ. Տիգրան փաշա որ Վերին Եղիպտոսի մէջ զօրապետ պտոյտ մը կատարելու վրայ է, շտրեքաթի տառու Գահիթէ կ'ըստպատի:

—Փաղաքիս Հայ Կաթողիկ հասարակութեան երեկները ուրախ օր պիտի ժողովին Պատրիարքարանի մէջ, Երիտասարդ Սահմանի Գեր. Սապարեան Եպիսկոպոսի վերադարձին առթիւ փայլուն ընդունելութեան մը պատրաստութիւններուն վրայ խորհրդակցելու համար:

ԲԱՆԱԲԱՍԱՆ ԱԾԽԱՐՅԷՆ

ՄՈՒՇԷ ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՈՒՄ-ԲԸ.— Ասիկ բանի մը օր առաջ Մուշէն հասած պաշտօնական տեղեկութիւններ կ'իմացնէին թէ քաղաքին շրջակայքը գտնուող Արաք վանքին մէջ ամբացած հայերու խումբը, որ ժամանակ մը մեկնած էր անկից, վերադարձեր է հոն՝ ուր թուրք զօրքերը պաշարեր են զինքը:

Դուռը խնդրած էր Պատրիարքին միջամտութիւնը, որ իր աշակցութիւնը նոյնիստ էր տեղական իշխանութիւններուն խնդրելով միանգամայն որ խնային վանքին որ արքանոց մը կը պարունակէ:

Յեղափոխականները նուաճելու համար միշտ հիմա եղած ջանքերը ի վերս ելան: Խումբին պետը Անդրանիկ չուգեր անձնատուր ըլլալ թուրք զօրքերուն: Պաշէն ըստացուած հրահանգներուն վրայ հի նուիրու տեղական իշխանութիւնը արիւնահեղութեան տեղի չի տալու և վանքն ու քրքանոցը վտանգի չ'ենթարկելու համար, առաջարկեցին Անդրանիկն ու իր ընկերները ազատ ձգել եթէ հաւանին թրքական հողէն դուրս ելլել:

ԻՄԱՍՏՈՒՆ ՍԿԶԵՆՈՒՈՒԹԻԻՆ
ՄԸ.— Նոր մեծ եպարգոս Սիմօն փաշա,

ըր. վերջապէս համարձակութիւն առաւ և արտասանեց սա բառերը:

—Փաշա, ձեզմէ մեծ ծառայութիւն մը ունիմ խնդրեցի:

—Ծառայութիւն մը. Կոչեք. ահ, խօսեցէք, օրիսդ. զիտայիք թէ որչափ երջանիկ պիտի ըլլայի ձեզի երախտիք մը մատուցանելով:

—Ինձի համար չէ, փաշա:

—Կը ցաւիմ, ըսաւ պարզութեամբ. բայց ով որ ալ ըլլայ այն անձը որուն համար պէտք ունիք իմ օգնութեանս, անոր օգուտը սիրելի պիտի ըլլայ ինձի, բովանդակ բարեկամութիւնս անոր կը պատշաճի:

—Շատ բարեփիրտ էք, զոչեք իր համայն շնորհապարտ էութեան թափով:

Ան՝ գլուխը տարախուտի կերպով մը թռթռեց և մրմնջեց:

նուազեցուց ոչ միայն իր ամսականը այլ նաև բոլոր նախարարներուն ամսականը: Ասանկով գործադրութեան կը գնէ իր հին խորհուրդներէն մին որ է խոշոր ամսականները նուազեցնել որպէսզի կարելի ըլլայ կանոնաւորապէս վճարել պղտիկ պաշտօնեաներուն ամսականը:

ՄԻՍ ՍԹՈՆ.— Կ. Պարոյ Միացեալ Նահանգներու զործակառար Պ. Էլտի Սէլանիկի ճամբով ազգաբարութիւն մը ստացաւ որով կիմացնեն իրեն թէ Միս Սթոնը և իր ընկերուհին Տիկին Ջիլքա ողջ և առողջ են:

ՏԱՀԿԱԿԱՆ ՓՈԽՈՒՈՒԹԻԻՆ.— Օոմանեան Պանքին ընելիք 600,000 ոսկիի կանխավճարին դաշնագիրը կնքելու համար ուրիշ բանի պէտք չիկայ բայց միայն Հոնոլուի Պարտուց յանձնախումբին ստորագրութեանը, միւս բոլոր ձեռեկրպուծիւնները կատարուած ըլլալով:

Նոր տարին սկսելուն, 1902ի Մարտ 13ին, հաւանականաբար մէջ տեղ պիտի նետուի նոր փոխտութեան մը խնդիր: Սիմօն փաշա կը կարծէ թէ ելմական կացութիւնը 4 միլիոն ոսկիի փոխտութեան մը պահանջելու է. Սուլթանը բոլորովին հակառակ է Տէրութեան կողմէ հաստատուած փոխտութեան մը գաղափարին:

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍԱՅՈՒՐ Բ. Դրան շեր. կայացուց շատ խիստ աղքատաբազիր մը պատերազմական փաստաթուղթեան առ հաշիւին մասին որուն յառաջիկայ վճարումը Յունիսը 13ին նշանակուած է: Դեսայանը գիտել կուտայ թէ 350,000 ոսկիի վրայ որոնց պայմանաժամը լրացած է, Ռուսիա մինչև հիմայ 40,000 ոսկի միայն ստացած է, ինչ որ բաւական կ'ապացուցանէ թէ թուրք նախարարը ուրիշ պէտքերու կը գործածէ պատերազմական փաստաթուղթեան գործադրելիք հասոյթները: Պ. Ջէնօլիէֆ կը վերջացնէ յայտարարելով թէ ասիկա ծանր զեղծում մը և խօսափաղաղութիւն մըն է և թէ իրերուն այս կացութեան շարունակութիւնը կը բռնադատէ Ռուսիան ապահով երաշխաւորութիւններ պահանջելու:

ՏԵՂԱԿԱՆ

Երէկ, առաւօտեան ժամը 10ին նախաբարական ժողով մը տեղի ունեցաւ Ապիտի պալատին մէջ Խոտիլին նախագահութեամբ:

—Յառաջիկայ հինգշաբթի օր Ռուսիոյ

—Ոչ, մի՛ կարծէք, ուրիշէ մը աւելի չեմ արեւ... միայն թէ սաստիկ ցանկութիւն մը ունիմ ձեզ երջանիկ տեսնելու, ու բան մը գտնար չպիտի երեկ ինձի, եթէ կարենամ ձեր երջանկութեանը նպաստել: Աղջիկը տեսաւ որ իր վրայ, միմիայն իր վրայ պիտի խօսէր, և չուզելով իր յայտնելիք գաղափարէն դատուիլ, ընդմիջելով յարեց:

—Սթա Ապուհայի համար է խնդրելիքս, փաշա:

—Ահ, փոքրիկ բարեկամութիւնդ... Շատ կը սիրեք զինքը: Ինչ ըրեր է արդեօք որ զինքը այդպէս կը սիրէք:

—Ձեռ սիրեց, բրէնս, դուրացուց ինձի համար այն բանը որ, առաջին օրերը, անկարելի կը թուէր ինձի. ինքը ամենէն առաջ բացաւ ինձի իր սիրտը, ինքը նախ

Գ. Է. ՍԵՆԱՎԱՆ

ԳՈՂՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՅԵՐՈՒ. ԳՈՂԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ՖՅՆՕԿՐԱՖՆԵՐՈՒ

կայսեր Նիքոլայ Ա. ի անուան տոնին առթիւ բոլոր հիւպատոսարանները դրօշակներով պիտի զարդարուին:

—Խալիպի գիւտագիտական վարչօր գործակատար Պ. Թուֆէնի յառաջիկայ կիրակի օր Եգիպտոս պիտի վերադառնայ:

—Ն. Ա. Խալիվը երեք հարիւր ոսկիի գումար մը նուիրեց Պէրպլէի, խարժուածի և Օսմանականի ազգայնական բաժնուկու համար:

—Բուսպարմանութեան ցուցահանդէսը յաւաքիկայ երեքշաբթի օր ցերեկուան ժամը երեքին պիտի բացուի Կէլիքի պալատին մէջ:

—Գահիրէի ծանօթ գործառուներէն Պ. Կէթէն և Շաուօ Բօր Սաիտի նախնական դատարանին շինութեան յանձնարարութիւնը ստացան: Շինութեան ծախքերը 3734 ոսկի կը հաշուուին:

—Մինիէի կառավարներու ցեղին պիտի Ապտալ-Է-Կաուսա Մանուր զինուորական ատենանին կողմէ 84 օր սաժանակիր աշխատութեան զատապարտուեցաւ որովհետեւ որոտարար յայտարարեց թէ երեք տեղացիներ իր ցեղին կը պատկանէին:

—Սիկանէթի գործառուները որոտարար առաւօտ գումարում մը ունեցան Հալար և մէկ զիշերներու սրահին մէջ: Ունէ խոտ վուրին տեղի չունեցաւ:

—Գործաւոր մը Գլօթ Պէյ փողոցինմէջ յարձակեցաւ Սէլիմ Կորիկի վրայ և բաւական ծանր կերպով վիրաւորեց զայն: Ոճաքաբժը ձերբակալուեցաւ:

—Շաբաթ առաւօտ գործաթողները նորէն նիս տունեցան մինչև կէսօր: Սէնտիքախ բողբոջ անդամներուն սիկանէթ բաժնուեցաւ:

—Կ. Պոլսէն եկող նաւերուն վրայ զբոսաւոր արանդինան վերցած է:

—Ուրբաթ իրիկուն յոյն ազգայնութեան պատկանող անձ մը Ապտալ-Է-Ազիզ փողոցին մէջ ծպտեալ ոստիկանի մը վրայ յարձակեցաւ և զաւազանի հարուածով մը ոտքը կտրեց: Վիրաւորեալը հիւանդանոց փոխադրուեցաւ:

—Ազեքսանդրիոյ ոստիկանութիւնը տեղեկացած ըլլալով թէ սիկանէթի գործաթող բանուորներ Գահիրէն Ազեքսանդրիա պիտի իջնան հանաքի Սուսա տան բանուորները գործադուլի հրաւիրելու համար, պէտք եղած հսկողութիւնը կատարել տուաւ կայաքանին և Սուսա վաճառատան մօտերը: Ծպտեալ ոստիկանները Գահիրէէն եկող բողբոջ կառավարներուն ի դուր սպասելէ ետքը տեղեկացաւ թէ գործաթողներուն կողմէ

երկու պատուիրակ միայն եկած են Գահիրէն: Ոստիկանութիւնը հրաւիրեց այդ պատուիրակները քսանը չորս ժամուան մէջ քաղաքէն մեկնելու, ինչ որ ըրին առանց կրկնել տալու:

—Յունուարի սկիզբները մեծ պարահանդէս մը պիտի տրուի Նիւ խէմիվիւ Օթէի հանգիստներու յատկացուած սրահին մէջ որ միեւնոյն ժամանակ բացման հանդէս մը պիտի ըլլայ:

—Պարահանգիստին հասոյթը պիտի յատկացուի լքեալ մանուկներու գործին. այժմէն կը խօսուի թէ լուսաւորութիւնը հրաշքի մը պիտի ըլլայ և ծաղիկաճուղիները մեծ հիացում յառաջ պիտի բերէ:

—Խալիվական երկրագործական ընկերութեան կողմէ կազմուած յանձնարարութիւնը մը կիրակի օր Ազեքսանդրիա հասնել տեղացի վրայ ուսումնասիրելու համար պահանջի ծանուցում նոր հիւանդանոցները:

Այս յանձնարարութեան անդամները որոնց կընկերանար Պ. Սէֆէր —որ ասկէ մօտաւորապէս վեց ամիս առաջ հանրային ուշադրութիւնը հրաւիրած էր այդ հիւանդանոցներուն վրայ— կապարի գացին աչքով հաստատելու համար ծառատուներուն մէջ եղած աւերումները:

—Եգիպտոսի մէջ չարագործներուն թիւը անկում ապրեցաւ, որոշուեցաւ մեծապէս ընդարձակել Հատարի բանտը այնպէս որ յիսունէն աւելի բանտարկեալ կարնայ պարունակել: Հիւանդանոցին շէնքը մօտաւորապէս երկու ամիսէն պիտի աւարտուի: Պէտք եղած բոլոր միջոցները ձեռք առնուած են հիւանդ բանտարկեալները խնամելու նպատակով:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՐԻՉ, 15 Դեկտ.— Երեսփոխանական ժողովը որոշեց հանրային կրթութեան նախարար Պ. Ի. Կի ատենախօսութեան պատերուն վերայ փակցուելը, ատենախօսութիւն մը որ կը պարտաւէ Հէրովէ ուսուցչին հակադիւրաբական վարդապետութիւնները:

ՀՌՈՄ, 15 Դեկտ.— Պ. Ծանար. աւելի խորհրդարանին մէջ պարզելով Նաւրի-Կոթար երկաթուղիին խնդիրը, յայտարարեց թէ այդ զիծը սահմանուած է մարդկութեան համար

փոխադրութեան մեծ ուղի մը ըլլալու:

ԼՈՆՏՈՆ, 15 Դեկտ.— Չորս հարիւր հոգիէ բաղկացած չորս վաշտ Արմենիոն դէմ կը բալեն Ֆիֆերիոյ մէջ: Նոյեմբեր 21ին այդ վաշտներէն մին թշնամիներուն որջը գրաւեց և անոնցմէ 80ը մեռուց: Արմենիոյ յարձակեցան ուրիշ վաշտի մը վրայ բայց մեծ կորուստներով ետ մղուեցան:

ԼՈՆՏՈՆ, 15 Դեկտ.— Գաբի գաղթականութեան Լոնտոնի դիւանագիտական ընդհանուր գործակատար Սըր Տավիտ Թէննէնթ կրիշաֆ Գոմիթիի հացկերոյթին յոյս տուաւ թէ պատերազմին վախճանը պիտի տեսնենք խորհրդարանին գումարումէն անմիջապէս ետքը: Ընդհանուր տեղակալ Սըր Ռոպերթ Ռոմէրս որ կը նախագահէր սեղանին յիշեցուց հատարմութեան չքեղ գրաւականը որ հարաւ. Աֆրիկեան տաքնապին տունը գաղթականութիւններու զաւակները տունին մայր հայրենիքին: Անոնց յիշատակը անջնջելի հետք մը պիտի ձգէ անգլիական ազգին սրտին մէջ:

ՀՌՈՄ, 15 Դեկտ.— Սլոտաքին գործող նախարարը յայտարարեց Երեսփոխանական ժողովին մէջ թէ Ֆրանսիան շատ գոհացուցիչ հաւաստիքներ տուաւ իտալիոյ Միջերկրականի և Տրիպոլիոյ մէջ իր բռնած քաղաքականութեան մասին: Ըսաւ թէ Ֆրանսիան միտքէն չանցնէր Տրիպոլիոյ մէջ կարաւաններու անցքը արգիլել և թէ այս պահուս փոխադարձ վստահութիւն մը կը տիրէ երկու երկրներու քաղաքական յարաբերութիւններուն մէջ:

ԼԱՀԷ, 15 Դեկտ.— Երէկ, թահուհին և իր ամուսինը քաղաքին մէջ պտոյտ մը կատարեցին: Բայց կռուքին և խանգալաւ կեցեցներ յարուցին բազմութեան մէջ:

ՊԵՐՍԻԱ, 15 Դեկտ.— Կայսրը Կարմիր Արծիւի ազամանազարդ շքանշանը շնորհեց իթօ մարքիզին: ԱՌԷՆՔ, 15 Դեկտ.— Սօֆի իշխանուհին մանչ զաւակ մը աշխարհք բերաւ:

Կ. ՊՈԼԻՍ, 15 Դեկտ.— Երեք պուլկար զինուոր մատակարար պատճառով միտրած ըլլալով, Քիլիթիէի

մօտ սահմանագլխէն անդին անցան. թուրքերը զէնք պարուցին. պուլկարներէն երկուքը փախան, երրորդը ձերբակալուեցաւ և զլիստուեցաւ: Պուլկարիոյ ներկայացուցիչը բողոք բարձաւ Բ. Դրան դէմ:

ՏԻԿԻՆ Է. Ա. ԱՐՍԼԱՆԵԱՆ
ԴԵՐՁՅՈՒՀԻ

Քաղաքիս մէջ ծանօթ այս դերձակուհին պատիւ ունի ծանուցանելու իր բազմաթիւ յաճախորդներուն ինչպէս նաեւ յարգող հասարակութեան թէ այս անգամ իր Պապ-Էլ-Լուքի աքրիկէն փոխադրած է Պապ-Էլ-Հատիտ փողոց Տէպպանէի նորաշէն տան մէջ, առաջին յարկ թիւ 3 արարթըմանը: 7—10

ՈՒՌԵՐ ԵՒ ՄԵՅՄԱՐԱՔԻ
ՆԱԽԿԻՆ ԲԱՍԲԱԼ

Տ. Մեր երկու ճիւղերը միացուցած և մեր մթերանոցները ընդարձակած ըլլալով, պատիւ ունինք ձեռն խընդրելու որ բարեհաճիք ձեր այցելութեամբ պատուել, Դեկտեմբեր 14 եւ սկսեալ, մեր հաստատութիւնը, տեսնելու համար մեր գեղարուեստական պղնձէ և բրածոյէ գեղարները զորս ստորագրած են 1900ի և 1901ի Բաբիլի աւաղանէ վարձատրուած արուեստագէտներ:

Այս ամեն առաւելները որոնք մէյմէկ զուլա-գործոցներ են, այցելուներու զմայլումը պիտի գրաւեն: Մեր յաճախորդները պիտի գտնեն նաեւ մեր խանութներուն մէջ գեղեցկակերտ սերուն կարասիներ և ըստ վերջի նորաձեւութեան խել մը կանանդի և ծնունդի նուէր ըլլալու արժանի նիւթեր:

Այս ամիս կը յիշեցնենք նաեւ թէ մեր ըով պիտի գտնէք ճոխ հաւաքածոյ մը Քրիսթոֆի արձաթեղէն սպաններու որոնց միակ ներկայացուցիչն ենք հոս:

Հաճեցէք ընդունիլ Տ մեր յարգանաց հաւատարմի:

ՈՒՌԵՐ ԵՒ ՄԵՅՄԱՐԱՔԻ
ԼԻՄԻՐԵՄ

Երեսփոխանական կ'երեւար թէպէտ, բայց հանգարտ էր. բռնեց իր ձեռքերը և ծանրախոհ կերպով մը սկսաւ խօսիլ:

—Ուղեցի որ գամ շնորհակալ ըլլամ ձեզի այն բոլոր բարիքին համար զոր կը բերէք հոս տանս մէջ, ամեն կողմէ ձեր գովեստը կ'ընեն ինծի, զաւակներս ակնկալութիւններէն շատ գերազանց վիճակի մէջ են: Ինչպէս փոխարէնը հատուցանեմ պիտի ձեզի:

—Ձեռքէս եկածը միայն ըրի, ըսաւ ժպտիլ ջանալով, և կը հաւատարմ ձեզի, բրէնս, որ ձեր բարեսիրտութիւնը, աշակերտներուս սէրը լիով կը վարձատրեն իմ ջանքերս:

—Մտածեցի, յարեց, որ ամսաթոշակներդ աւելցնեմ. մօրս հետ խօսեցայ, և յառաջիկայ ամիսէն սկսեալ երկու հարիւր

պաշտպանեց զիս... երբեք չպիտի մոռնամ:

—Ահ, կրկնեց բրէնսը, և ինչո՞ւ համար պէտք կունենայ կար ինծի, Սթա Ապուհան:

Այն ատեն ժերմէն պատմեց ամուսնութեան ծրագիրը, հանձնին կամքը, այլ տնհամեմատ անյարմար ու անարդար միութեան պատրաստուելու համար Սթա Ապուհայի տրուած հրամանը: Մինչդեռ կը խօսէր, ու կը նկարագրէր դեռահասակ աղջկանը երիտասարդութիւնը, գեղեցկութիւնը, զոր այն ծերին կը սահմանէին, գեղեցիկ զայրոյթ մը զինքը կ'աշխարհէր, բարկութեան կրակով մը կը բոցաներկէր իր այանքը, և հիմախուս այդ ոգեւորութեանը մէջ, Մուրատ աւելի հրապուրիչ, ալ աւելի կին կը գտնէր զայն, այնչափ նոր զգլխիչ շորահագեղութեամբ, որ հմայուած մնաց, հա-

զիւ թէ մտիկ ընելով անոր ըսածները, միայն օրօրուելով անոր ձայնին անպատմելի անուշութեամբը:

Անոր ամեն ուզածը խոստացաւ կատարել... երբեք չըրաւ որ փոքրիկ ֆէլահ աղջկանը իրաւունքը յարգել պիտի տար:

—Իմ պաշտպանութեանս տակ կ'առնեմ զայն, ըմբաց, գոհ էք:

—Ոհ, փաշա, ինչպէս շնորհակալ ըլլամ ձեզի:

—Շնորհակալ չըլլալով... հիմայ, կը թոյլատրէք ինծի որ ձեր վրայ խօսեմ... Ասոր համար եկած էի...:

Ժերմէն վրդովեցաւ. հիմայ իր պաշտպանի գերը ըմբացած էր. կրնա՞ր միթէ խոսափիլ, կրնա՞ր չքմեղանք մը գտնել զանի հեռացնելու համար, հիմայ որ դարձեալ այնչափ բարութիւն ցոյց տուած էր իրեն:

Յ. ԲԵՄՊԵՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎՈՃԱՌԱՏԵՂԻ ԳԱՀԻՐԷ, — ԱԹԱՊՍ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԿԻՆ ԶԱՊԹԻՑԷԻ ՇԷՆԲԻՆ ԴԵՄ

ՄՈՒԶՈՒԱԼ ԼՍՅՅ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒՆՈՐՔԻ ԱՄԵՐԻԿԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՅՈՒՆ 1843 թ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՐԾԱՐ ՄԵՎ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՅՐԱՆԲ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւնները կը գո ծաղրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒԶՈՒԱԼ ԼՍՅՅԻ սակագիրը և ապահովագրութեան զանազան գրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրուիք. — Առատաձեռն պայմաններ
Տեղեկութեանց համար գլխելի Գահիրէ առ Պ. Ն. ԳԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼԻՅԻՆ, Ընդհ. ներկայացուցիչք:
Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալուար. Գ. ԵԿՍԻՈՅ Դեր-Գործակալ Ի Գահիրէ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 200,000,000 ՅՐԱՆԲ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ՅԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ, ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԻՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Ճրանայի և օտար երկրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և փարկագրեր:

Կը գանձէ եգիպտոսի և արաւ-սահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաւամբ մուհակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԽԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԽԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՅՈՅ ԳԻՐ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բերէա, Իզմիր, Միտիլի և Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբթի օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգեաները Բի-

րէա հանգիպելուն, Աթէնք այցելել:

ՍՈՒՐԻՅՈՅ ԳԻՐ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բօս-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մերսին և Իսկէնտերուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:

Տասնընչից օրը անգամ մը՝ երթեւել կարմիր

Շոքու հետեւեալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՅԷ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանց համար դիմել Ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բօս-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Բուրի ամեն մամնաճիւղերուն:

1--1902

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ-ԴՈՐԾԱԿԱՏԱՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՐՁՆԿԱՑԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

Գահիրէէն և չրջականերէն կ'ընդունուին՝ Պոլիս, Վենետիկ և արտասահմանի ուրիշ կեդրոններ զանազան ամեն տեսակ գիրքերու, ինչպէս նաև Համպուրի, Պրոնշուիի վիճակահանութեանց տոմսակներու, Եգիպտական Բրէտի Զօնսիէի, Բումէլիի երկաթուղոյ բրոմէսներու, և դարձեալ ամառվճարներով արժէթղթեր ձեռք բերելու յանձնարարութիւններ կային:

Արժէթղթերու, վիճակահանութեանց վերաբերեալ ապստանները ըլլալու են կանխիկ փոխութի միջոցաւ: Գիրքերու համար կարելի է նախապէս կէսը զրկել և մնացեալը «գօնթու ուսմ. պուրսքման» վճարել այն պահուն, երբ յանձնարարուածները զրկուին իրենց հասցէներուն:

Մինչև 20 զրշ. արժէքով յանձնարարութիւններու համար Եգիպտ. Յ. միլիտոյ զրոշմաթուղթեր կ'ընդունուին:

Փոխադրութեանց, թղթակցութեան, մաքսի ևայլն ծախսեր միշտ յանձնարարողներուն կը պատկանի:

Հասցէ՝

Garabed Erzenatzian
Rue Abdul-Aziz

CAIRE

Ա. ՄԱՅԵՐ ԵՒ ԸՆԿ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ, ԳԱՀԻՐԷ

—X—

Մեծ վաճառատուն հանդերձեղինաց, արանց, կանանց և տղայոց համար:

Ձախի վրայ զգեստներ, լուսազոյն պայտնակներով:

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն ՇՈԳԵՆԱԽԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՏԻՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԽՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի ՄԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՅԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւորով

ԱՆԱՐԸՐԷՐՈՐ ՆԻԲՈԼԱ. արդթ. թօն. 5500	2ԻՍԱՋՈՅ տարողութիւն թօնօ	5500
ԲԷՆ ՕԼԿԱ	" " 5500	2ԱՐ " " 5500

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՕՌ ՍԱՅԻՏ, ԵԱՅՍ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԵՐՍԻՆ, ԲԻՐՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղեքսանդրիայէն դէպ ի ԲՕՌ ՍԱՅԻՏ, ԵԱՅՍ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԵՐՍԻՆ, ԲԻՐՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Աղեքսանդրիա, Բիթրասան փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագրութիւն Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էյվին Բալմեր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մամնաճիւղիք.

Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ:

ԴՈՒՄԱՐԱՄԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՍՐՏԱՄԱՐՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս լուծելու համար պէտք է աճեալէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգու գէղէն մէյլէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ ալքոլային գէղիւր նման չի խանգարի ստամբուր:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

30—316

Գ. ԵՒ Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԻՏԻՅԷ — ԳԼԽԱԽՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԻՆ ՋԱԲԻԹԷԻ ՇԷՆԲԸ